

ԹՈՒՐԿԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ԲԱՐԴ
ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շարահյուսական իրողությունները, մասնավորապես՝ նախադասության որպես մտածողության և հաղորդակցության լեզվական նշանի, նախադասության անդամների, նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների բառաբերականական օրինաչափությունների, բովանդակության և արտահայտության բնութագրերը վերջին հիսուն տարիների ընթացքում դարձել են ուսումնասիրության կարևոր բնագավառ: Լեզվաբանական միտքը քննության է առել ոչ միայն ենդերոպական, այլև թուրք-թաթարական և այլ լեզուներում դրանց առկա վիճակը, կառուցվածքային յուրահատկությունները, ընդհանրական ձևերն ու տարբերությունները: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում թուրքերենի շաղկապական բարդ ստորադասական նախադասությունների դրսևորումները: Սույն հոդվածի շրջանակում կփորձենք ներկայացնել առավել կիրառական կաղապարները:

Թուրքերենում շաղկապական ստորադասությունը շատ քիչ է տարածված: Բավական է ասել, որ բուն թուրքական ստորադասական շաղկապներ, բացի *ki* - *ից* (հանդիպում է հին տեքստերում) և մի քանի այլ շաղկապներից, գոյություն չունեն, որպես շաղկապ է հանդիսանում նաև շեշտագուրկ բառ *da*-ն (*de*, *ta*, *te*): Օրինակ՝ *Ne yaptın da seni polis arıyor*. (բացատրական կապով) - Այդ ի նչ ես արել, որ քեզ ռստիկանությունն է փնտրում:

Annesi bütün gün ondan bahsettiğini söylemişti de, acaba siz miydiniz diye merak ettim. (պատճառային կապով) - Նրա մայրը պատմում էր, որ ամբողջ օրը նրա մասին էր խոսում, դրա համար էլ ես հետաքրքրվեցի, թե արդյոք դա յուր չէի ք:

Nece uzun geceler, sabahlara kadar hıncıralık ‘anne, anne’ diye sayıkladım da kimse arayıp sormadı. (ներհակական կապով) - Քանի երկար գիշերներ, մինչև առավոտ լաց լինելով, զառանցում էի «մայրի կ, մայրի կ», սակայն ոչ ոք չհետաքրքրվեց, չհարցրեց:

Köpeğe şu ineği isir da hendegi atlasın, dedim, ısırmadı. (նպատակի կապով) - Շանն ասացի. «Գծիր այն կովին, որպեսզի նա ցուտկի առվի վրայով չկծեց»:

Շաղկապական բառերը ևս կազմում են բարդ ստորադասական նախադասություններ: Շաղկապական (հարաբերական) բառերն են *bunun için*, *bundan dolayı*, *bundan ötürü*, *bu yüzden*, *bunun üzerine* (այս պատճառով), *onun için*, *onun üzerine* (այն պատճառով), *bu sayede* (սրա շնորհիվ), *o sayede* (նրա շնորհիվ):

Օրինակ՝ ...benim aynada kızı gördük, bunun için kızı ben isterim.- ... աղջկան իմ հայելու մեջ տեսանք, այս պատճառով ես կուզեմ նրան¹:

Ըստ Վ. Գորդլևսկու երկրորդական նախադասությունները ոչ հարուստ շաղկապներով և նախադասությունների միջև կապի հաստատման այլ ձևական միջոցներով, բնորոշ չեն թուրքական լեզուներին²:

Ենթակա երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև -dik, -acak, -ma դերբայական ածանցներով կազմված դերբայներով և պատկանելության ածանցներով: Օրինակ *Doktora şimdiye kadar müracaat ettikleri vaki(t) olmamıştı.* - Չի պատահել, որ մինչև այժմ բժշկի դիմած լինեն: *Gelmiyeceğiniz malumdür.* - Հայտնի էր, որ դուք չեք գալու:

Benim aradığım burada var mı? - Իմ փնտրածն այստեղ կա՞: (Այստեղ կա՞ այն, ինչ փնտրում եմ):

Լրացում երկրորդականները կապակցվում են.

ա) Ամբողջական նախադասություններին *ki*-ով սահմանական եղանակով կամ ավելի հազվադեպ ըղձական եղանակով: Օրինակ *Gördüm ki başına bir şey gelmişti.* - Տեսա, որ նրան մի բան էր պատահել:

բ) Կրճատված ձևով

1. Դերբայներ *-dik*-ով, եթե գործողությունը կամ կատարվում է կամ կատարվելու է: Օրինակ *Gegen izinde de oraya gitmiş olduğumuzu ilâve etti.* - Նա ավելացրեց, որ անցյալ արձակուրդներին էլ այնտեղ էինք գնացել:

2. Դերբայներ *ma/me*-ով (երբեմն դերանվանական նախածանցներով) կամ անորոշ խոնարհմամբ, երբ արտահայտվում է ցանկություն: Օրինակ *Suda kalmamızı tembih ederek...* - Պատվիրելով, որ մենք մնանք ջրում...բայց *Ne kadar suda kaldığımızı bilmiyorum.* - Չգիտեմ, թե որքան մենք մնացինք ջրում:

Լրացական նախադասությունների բազմազանության մեջ են մտնում անուղղակի հարցերը, այսինքն՝ այն հարցական նախադասությունները, որոնք կառավարվում են (կախված են) այլ նախադասության բայով: Ամբողջական տեսքով դրանք իրենց կառուցվածքով չեն տարբերվում ուղղակի հարցերից, դրանց կրճատման դեպքում էլ նրանք պահպանում են բոլոր հարցական բառերը (դերանուններ, շաղկապներ), իսկ ստորոգյալը դրվում է դերբայական ձևով:

Օրինակ *Nerede oturduğunu bilmiyorum.* - Չգիտեմ, թե որտեղ է բնակվում (կամ բնակվել):

1. Որոշիչ երկրորդականներն արտահայտվում են

ա) *ki* պարսկական շաղկապի հետ կառուցվածքով:

¹ Кононов А.Н., Грамматика современного турецкого литературного языка, М., 1959, с. 538 – 540.

² Гордлевский В.А., Грамматика турецкого языка (морфология и синтаксис), Москва, 1928, стр. 118.

[illegible]

Միջակա երկրագործական լավագույնից բաղդ ստորագրատան
հանձնարարություն

Այսպես են կազմում այն բանը, ստատիստիկական նախադասությունները, որոնց կազմում առաջադաս ընդգրկվելը կառավարում է գլխավոր նախադասության նկատմամբ վերջ թաղանթներում գրառք կազմվում են և շարկագրով, որն իրար է կապվելով գլխավոր և ենթակա երկնորդական նախադասությունները։ Ենթակա երկնորդականը, որ ապօրոգրար արտահայտված է ընդարձակ երկնորդ նախադասությամբ, ըստ էության, միանգամ գլխավոր նախադասության արտահայտված զործողության սուրբեկուն է։

Մարտի քաղ. նախադասությունները, ըստ գլխավոր նախագահ-
անքանիշի ընտանիքի ընտանիքի կազմի, կարելի է բաժանել
անվանական և քաղաքական։ Անվանական գլխավոր նախագահությունները
սովորաբար արտահայտվում են անվանականով և մակերեսներով, որոնք սենն
ենունքով ընտանիքի՝ վարչական, կազմադր, ենթադրություն, անհրա-
ժեշտություն և այլն (սխեսի, yazık, belli)։ Օրինակ՝ Belli ki, sözleri kulak bile
vermemis, arkadaşın ne dediği anlamamıştı։ Հայտնի է, որ նա նույնիսկ ուշադրու-
թյուն չի դարձրել այս հարցերի վրա, չի հասկացել, թե ինչ է ասել իր ընկերը։

Բարձրագույն վերաբերման համարժեքներն արտահայտվում են կրա-
վարական սեռով որպես բացերով, որոնք սովորաբար ունեն հուզական,
բնորոշական և այլ իմաստներ: Օրինակ Görsünyor ki, bu çeşit yüklem, yan cümleliğe
ör olumsuzluk anlama katmaktadır. Երևում է, որ այսպիսի ստորոգյալները
ստորոգյալական եռադասությունը բացասական իմաստ են հաղորդում:

Որպես գլխավոր նախադասություն՝ կարող են հանդես գալ անեծքակա գաղափարները: Օրինակ՝ *Bereket versin, ahir tek bir yarı idi.* - Բարեբախտաբար, ախար միակ կտուղյն էր:

Գլխավոր նախադասությունում կարող են իսկապես գալ նաև, այսպես կոչված, դերասուն-տարածական ածականները, որոնց վերացական կշանա-կությունը բացահայտվում է երկրորդական նախադասության մեջ:

Օրինակ Օւլե օւնու եւ, չափս ստին ածցիմ քաղերի ճիլ քաթ ստին ալաչիմ
շէլերն քարսին քաթա յերըրմ։ - Այնպէս եղալ, որ նրանց կտայի ոչ միայն գնաձ
քաթերներ, այլ նաև իրերի տոնք պետք է գնէի, գումարը³:

Ի տարբերություն թուրքերենի՝ հայերենում ենթակա երկրորդականը ստորոցայի հետ կապվում է կամ անմիջաբար, կամ էլ հարաբերյալի միջնորդությամբ։ Ենթակա երկրորդական նախադասությունները կապակցվում են

³ Баскаков Н. А., Предложение в современном турецком языке, Москва, 1984, с. 157 – 158.

ինչպես շաղկապներով, այնպես էլ հարաբերական դերանուններով, ըստ այդմ էլ՝ բաժանվում են երկու խմբերի՝ շաղկապական և հարաբերական:

Շաղկապական ենթակա երկրորդականով բարդ ստորադասական կառույցները գլխավորին ստորադասվում են *որ, թե, երբեմն՝ երբ, եթե, որպեսզի* շաղկապներով: Գլխավորում որպես կանոն հարաբերյալներ չեն գործածվում, երբեմն հանդիպում է *այն* հարաբերյալը, որը հնարավոր է ազատորեն գեղչել⁴: Հարաբերական ենթակա երկրորդականով բարդ ստորադասական կառույցները գլխավորին ստորադասվում են *ով (ով որ), ինչ (ինչ որ), որ* դերանուններով: Այս հարաբերական դերանուններով ստորադասված բաղադրիչները կարող են կապվել գլխավոր նախադասության թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիկական գործունեություն մատնանշող ստորոգյալների հետ՝ տեսականորեն ~~ստան~~ սահմանափակման: Երկրորդականը կարող է լինել առաջադաս, միջադաս և վերջադաս: Որպես հարաբերյալներ կարող են հանդես գալ *ամեն որ, ամենքը, ով, յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, բոլորը, այնպիսիները, ոչ ոք* և այլ դերանուններ: Օրինակ՝ «Ով ձեռք է բարձրացնում մեր երկրի վրա, նա Աստծու թշնամին է»:

Ենթակա երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններն անմասնատունակ են⁵:

Խնդիր երկրորդականով շաղկապական բարդ ստորադասական նախադասություններ

Խնդիր երկրորդականներով բարդ ստորադասական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության խնդրառու բառերին (գերազանցապես բայերին):

Նախադասության այս տիպը նույնպես կապակցվում է շաղկապով և շաղկապական բառերով *ki, ya, diye, da*. Խնդիր երկրորդական նախադասությունը բնութագրում է գլխավոր նախադասության ստորոգյալով արտահայտված գործողությունը: Օրինակ՝ *Eminim ki, sinifını geçecek*. - Վստահ եմ, որ նա կփոխադրվի հիջորդ դասարան:

Anlamı ki, başka türlü rahat ve huzura kavuşamayacak. - Հասկացել էր, որ այլ կերպ չէր կարող հանգստության հասնել: - *Bana öyle geliyor ki, siz dünyadaki erkeklerden en güzelsiniz*. - Ինձ այնպես է թվում, որ դուք աշխարհի տղամարդկանցից ամենագեղեցիկն եք:

Da շաղկապով

Bu Tahir amcanın, dört erkek kardeşi varmış da kimse bilmezmiş. - Ոչ ոք չգիտեր, որ այս Թահիրի հորեղբայրը, չորս եղբայր ուներ: - *Ne iyi ettin de geldin*. - Ինչ լավ արեցիր, որ եկար:

Ya շաղկապով

⁴ Գաբեգիսյան Գ. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1964, 137 - 139:

⁵ Նույն տեղում, էջ 145:

Anlıyorsunuz ya görünüş insanın ne kadar aldatıyor. - Հասկանում եք, որ արտաքին տեսքը որքան է խաբում մարդուն:

Diye zəhləqayով

Artık bütün mahalleli, bakalım Tahir amcayı ne zaman öldürecekler diye merakla bekliyoruz. - Այժմ արդեն մենք թաղամասի բոլոր բնակիչներս, հետաքրքրությամբ սպասում ենք այն բանին, թե սենսենք էրբեք են սպանելու Թահիր հորեղբորը⁶:

Հայերենում այս կառույցներն անմասնատունակ են: Խնդիր երկրորդականներով բարդ ստորադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ շաղկապական և հարաբերական. Մեծ մասամբ լինում են վերջադաս, նաև առաջադաս, բացառիկ դեպքերում միջադաս: Հարաբերյալի գործածությունը գլխավորում կարող է լինել պարտադիր և ոչ պարտադիր: Օրինակ «Ինչ պահանջում էին, (այն) կատարեցի»: Հարաբերական խնդիր երկրորդականով՝ «Խուսափիր նրանից, ով փառասեր է»: Շաղկապական երկրորդականով՝ «Վեճը հանգեց նրան, որ նրանք ընդհարվեցին: Հայտնի է նրանով, որ հաղթել է չեմպիոնին»⁷:

Այսպիսով, թուրքերենում երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կարող է կապակցվել շաղկապով կամ առանց դրա: Շարահյուսական (անշաղկապ) կապակցության համար հատկանշական է շաղկապների ու հարաբերականների բացակայությունը:

Ժամանակակից հայերենում առավել տարածում է գտել կապակցության շաղկապական ձևը: Դա գալիս է նրանից, որ ժամանակակից հայերենում բավականին տարածված են ստորադասական շաղկապները և հարաբերական դերանունները: Ի տարբերություն ժամանակակից հայերենի, թուրքերենում շաղկապական համակարգը շատ թույլ է զարգացած և հիմնականում փոխառված է պարսկերենից ու արաբերենից: Շաղկապական կապակցությունը հիմնականում գործածվում է խոսակցական լեզվում: Հետևաբար, թուրքերենում առավել տարածված շարահյուսական կապակցման ձևը (գրական լեզվում) շարահարականն է (անշաղկապ):

⁶ Баскаков Н. А., նշվ. աշխ., էջ 159 - 160.

⁷ Գարեգինյան Գ. Լ., նշվ. աշխ., էջ 184 - 186: